

ցաք. եւ յետինքն հազիւ հասաք ի Հայոց եկեղեցին եւ շրիթաշն :

10 Եւ տեսեալ զցանկալին ամենեցուն զմեծահամբաւ եւ հռչակաւոր կայսերանխտ եւ հայրապետական մայրաքաղաքն զմեծն Հռոմ : Եւ մէջ քաղքին երթայր մեծ գետ մի եւ սրընթաց՝ պղտոր նման Խըզըլ Երմախին, սւրախացուցանելով զքաղաքն, ըստ այնմ թէ

15 Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաք :

Եւ եկեղեցին Հայոց քարէ մեծ եւ տասն օտա քարէ ունէր վասն ըխտաւորաց. այլ եւ զարպասնի եպիսկոպոսաց, քահանայից եւ

20 այլ կրօնաւորաց, առչակ, անկողին : Իսկ վարդապետն Չաքարիայ տեսեալ զիս ուրախացաւ. եւ էառ առ ինքն եւ համբուրեալ զմիմիանս հաշտեցաք : Եւ յետ աւուրց ինչ կոչեցաք զՀայոց թարձիմանն Յակոր անուն

25 Ամթեցին¹, որ քառասուն ամ կամ աւելի էր անդ. եւ Փափն հինգ հարիւր զուռուչ թային էր արել նմա վասն թարգմանելոյն : Ձնա յղարկեց Փափն : Եւ արարեալ էին Վարդապետին թային նաֆաղայ օրն ԺԲ հաց, հինգ

30 օխա միս, երկու հաւ, երկու օխայ գինի, աղն, քացախն եւ այլն. այլ շարաթն հինգ զուռուչ ճէպ խարճի : Եւ էր անդ էրէց մի

12 ի մեծն հրոմ : — 20 յանկողին : — 21 լուրախացաւ : — 25 յամթեցի... յաւելի :

¹ Յակոր թարգման կը յիշուի ի Հռոմ արդէն 1597ին. հմտա. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 354 :